

ՄԱՍ I

ՀՀ Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Չ Ե Կ ՈՒ Յ Ց Ը

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍ I-Ա

2007 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ՀՀ կառավարության կողմից ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ), Հակակոռուպցիոն ռազմավարության և ՀՀ 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի պահանջները՝ 2007թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու տնտեսական աճի բարձր և կայուն տեմպերի պահպանմանը, մակրոտնտեսական կայունության ապահովմանը, բնակչության, հատկապես անապահով խմբերի կենսամակարդակի բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը, գործազրկության շարունակական նվազեցմանն ու դեռևս առկա սոցիալական և տնտեսական այլ հիմնախնդիրների լուծմանը:

Տնտեսական զարգացում

2. ՀՀ տնտեսության վերջին տարիների ձեռքբերումները հաստատեցին ՀՀ կառավարության կենսունակ և զարգացող տնտեսության կայացմանն ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և կայուն տնտեսական աճի միտումների շարունակական բնույթը:

3. Ձեռք բերված հաջողությունների պահպանման և ամրապնդման, երկրի տնտեսությունը հեռանկարային զարգացման ամուր և որակապես նոր հիմքերի վրա դնելու, գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, մրցունակ և գիտատար ճյուղերի գերակշռության ապահովման նպատակով 2007թ. իրականացվելիք միջոցառումներն ուղղված կլինեն.

- տնտեսության կայուն զարգացման հենքերի ամրապնդմանը, ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի շարունակական բարելավմանը, ներդրումային ակտիվության աճին հետևողական աջակցությանը,

- գործարարության պայմանների հստակեցման ու խոչընդոտների վերացման նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործմանը և միջազգային նորմերին համապատասխանեցմանը,

- Հայաստանի, որպես տնտեսական գործընկեր, վարկանիշի բարձրացմանն ու համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման դրական արդյունքների ամրապնդմանը,

- վերջին տարիներին ձեռք բերված ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի տեմպերի միտումների պահպանմանը,

- տնտեսության մեջ ինովացիոն գործընթացների աշխուժացմանը, ազգային ինովացիոն համակարգի զարգացմանը, գիտության և տնտեսության իրական հատվածի միջև կապերի սերտացմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովմանը,

- փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծավալների շարունակական ավելացմանը և կատարելագործմանը,

- զբոսաշրջության ոլորտի շարունակական զարգացմանը,

- տարածքային տնտեսական զարգացմանն ուղղված հասցեական գործողությունների ձեռնարկմանը:

Արդյունաբերական քաղաքականություն

4. 2007թ. կշարունակվեն քայլերն արդյունաբերական համալիրի՝ որպես երկրի տնտեսական անվտանգության հիմքի դերի ու նշանակության վերականգնման ուղղությամբ:

5. Մեքենաշինության ոլորտում թողարկվող արտադրանքի որակական հատկանիշները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կկարևորվի արդի տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպես նաև տեղական արտադրության հաշվին ներմուծվող համալրող սարքավորումների մասնաբաժնի կրճատումը:

6. Քիմիայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված կլինի համակարգաստեղծ ձեռնարկությունների վերագործարկմանը և կայուն զարգացմանը, ինչպես նաև արտաքին շուկաների ընդլայնմանը՝ նոր մրցունակ արտադրատեսակների թողարկման շնորհիվ: Հատուկ ուշադրության կենտրոնում կլինեն ոլորտի բնապահպանական խնդիրները:

7. Թեթև արդյունաբերության ոլորտում կխթանվեն արտասահմանյան պատվերների ներգրավման աշխատանքները, ինչը հնարավորություն կընձեռի լիարժեք օգտագործել առկա հզորություններն ու ստեղծել նոր աշխատատեղեր:

8. Հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող քաղաքականությունը կնպատակաուղղվի վերջին տարիների արդյունքների ամրապնդմանն ու զարգացմանը: Կիրականացվեն անհրաժեշտ աշխատանքներ ոլորտի ընկերությունների կողմից ընդերքի ռացիոնալ օգտագործման և հանքարդյունահանման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Կիրականացվի համապատասխան հսկողություն հանքարդյունահանման լիցենզային պայմանագրերի և տնտեսվարող սուբյեկտների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ:

9. Ակնագործության և ոսկերչության ոլորտում իրականացվող աշխատանքները կնպատակաուղղվեն վերջին տարիներին այս բնագավառում նկատվող միջազգային շուկայի կոնյունկտուրայի վատթարացման հետ կապված որոշակի բացասական երևույթների հնարավորինս մեղմացմանը և չեզոքացմանը:

Ներդրումային ոլորտ

10. Վերջին տարիներին տնտեսական աճի կարևոր գործոն հանդիսացավ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական և հատկապես ուղղակի ներդրումների ներգրավման քաղաքականությունը, որն իր տրամաբանական շարունակությունը կունենա նաև 2007թ: ՀՀ կառավարությունը, առաջնորդվելով «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգով, կշարունակի աշխատանքները օրենսդրական դաշտի հստակեցման, վարչարարական խոչընդոտների նվազեցման և ներդրումների պաշտպանության ուղղությամբ:

11. Դեպի արտադրական ենթակառուցվածքներ և նյութական արտադրության ոլորտ ներդրումների ներգրավման համար լուրջ խթան կհանդիսանա լիզինգային գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրական դաշտի, ինչպես նաև ներդրումային գործունեության ռիսկերը որոշակիորեն նվազեցնելու նպատակով միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգի ձևավորումը:

Գիտություն և գիտատեխնիկական ոլորտ

12. Հանրապետության գիտատեխնիկական համալիրի նվաճումների օգտագործումը և ներգրավումը տնտեսական շրջանառության մեջ ՀՀ Կառավարության կողմից դիտարկվում է որպես զարգացման առանցքային ուղղություն: Չարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն գործունեությունը և գիտատար արտադրությունները հանդիսանում են տնտեսության իրական, արագ զարգացող և արդյունավետ ճյուղ, որը զգալի ազդեցություն ունի տնտեսության մյուս ճյուղերի վրա: Հայաստանն իրական հնարավորություններ ունի առևտրային արժեք ներկայացնող արտադրատեսակների և տեխնոլոգիաների ստեղծման և արտահանման համար:

13. ՀՀ-ում ժամանակակից գիտելիքահենք տնտեսության և ինովացիոն ոլորտի ձևավորմանն ուղղված առաջին քայլը կլինի ազգային ինովացիոն համակարգի ստեղծումը և արդյունավետ գործունեության ասպիտակումը: «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի գործողության մեջ մտնելն առաջին անգամ իրական հնարավորություն է ստեղծել գործուն աջակցություն ցուցաբերել համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմանն ու առանձին ինովացիոն, հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող նախագծերի իրականացմանը, որոնք կնպաստեն տնտեսության գիտատար ճյուղերի զարգացմանը:

14. 2007թ. զարգացման կայուն տեմպեր կապահպանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Կրնդլայնվի և կիտրացվի ուսումնական և ծրագրային արտադրանք թողարկող ընկերությունների համագործակցությունը հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների հետ:

15. Կշարունակվի հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային ասպարեզում ներկայացման գործընթացը, մասնավորապես Հայաստանը կառավարական մակարդակով կներկայացվի Հանովերում (Գերմանիա) կայանալիք CeBit-2007 ցուցահանդեսին, իսկ ԱՄՆ-ում անցկացվող ArmTech համաժողովին կմասնակցեն հայաստանյան և սփյուռքահայ առաջատար ընկերությունները:

Մտավոր սեփականության քննազավառ

16. Հաշվի առնելով հանրապետությունում տեխնիկայի և տեխնոլոգիաների, գիտության, գրականության և արվեստի զարգացման խթանման առանձնահատկությունները, սպրանքների և ծառայությունների իրացման հետ կապված շուկայական տնտեսվարման մշակույթի և բարեխիղճ մրցակցության ձևավորման, ինչպես նաև

եկրահնտեգրմանն ուղղված աշխատանքները 2007թ. կշարունակվի բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը:

17. Հեղինակային իրավունքի բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի ազգային մշակույթի և արվեստի զարգացմանը խոչընդոտող ապօրինի արտադրանքի շրջանառության դեմ հետևողական պայքարին: Մտավոր սեփականության իրավունքների խախտումների հետ կապված վեճերի արդարացի և արդյունավետ լուծումն ապահովելու նպատակով կշարունակվեն աշխատանքները տվյալ բնագավառում դատավորների պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

18. Բնագավառին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում, ինչպես նաև օրենքով նախատեսված արդյունաբերական սեփականության օբյեկտներին իրավական պաշտպանություն տրամադրելու հետ կապված, կշարունակվեն աշխատանքները համապատասխան տվյալների բազայի կատարելագործման ուղղությամբ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

19. ՀՀ կառավարության կողմից պետական աջակցության ծավալների տարեցտարի ավելացումը նպաստեց փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի կայուն զարգացմանը, ինչի արդյունքում 2005թ. ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմեց շուրջ 40 տոկոս՝ գրեթե 2 անգամ գերազանցելով 2000թ. մակարդակը: 2006թ. կավարտվեն ՓՄՁ պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՓՄՁ Չարգացման Ազգային Կենտրոնի մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական և կադրային ապահովման աշխատանքները, ինչը կնպաստի 2007թ. պետական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացմանը:

20. 2007թ. ոլորտի զարգացման և պետական աջակցության հիմնական ուղղություններ կհանդիսանան.

- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ավելացումը, վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակների ընդլայնումը,

- ՓՄՁ սուբյեկտների կողմից (հատկապես արտահանման ներուժ ունեցող) թողարկվող արտադրանքի ու մատուցվող ծառայությունների շուկաներ առաջմղմանը, ժամանակակից տեխնոլոգիաների, ինչպես նաև որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների (համակարգերի) ներդրմանն աջակցությունը,

- ՓՄՁ սուբյեկտների՝ գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը, սկսնակ ձեռներեցներին աջակցություն՝ «Հաջող սկիզբ» ծրագրի իրականացման միջոցով, հատկապես ՀՀ մարզերում,

- ՓՄՁ սուբյեկտներին լիզինգային ծառայությունների տրամադրման ծրագրի իրականացումը՝ նոր ֆինանսավարկային կազմակերպությունների ներգրավման միջոցով,

- միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակումը և իրականացումը:

Արտաքին տնտեսական գործունեության բնագավառ

21. Այս բնագավառում տարվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու համաշխարհային տնտեսության մեջ հանրապետության ինտեգրման գործընթացի խորացմանը, արտաքին տնտեսական գործունեության զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը, հայրենական ապրանքների և ծառայությունների արտաքին շուկաներում վարկանիշի բարձրացմանը, օտարերկրյա ներդրումների

ծավալների ավելացմանը, միջազգային առևտրատնտեսական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև հանրապետությունը հաղորդակից դարձնելու միջազգային տնտեսական, տեխնոլոգիական և գիտական նվաճումներին:

22. 2007թ. ընթացքում կիրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ ուղղված արտերկրի հետ բազմակողմ և երկկողմ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնմանը, արտերկրներում ՀՀ առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների համակարգի զարգացմանը:

Ճյուղային և տարածքային տնտեսական զարգացում

23. 2007թ. ընթացքում կշարունակվեն տարածքային տնտեսական և տնտեսության ճյուղերի զարգացմանն ուղղված աշխատանքները:

24. Տնտեսության զարգացման համար կարևոր նախապայման է հանդիսանում երկրի մրցունակության բարձրացումը, ինչն ուղղակիորեն կապված է առանձին տարածաշրջանների և տնտեսության ճյուղերի մրցունակության բարձրացման հետ: Այն հնարավոր է իրագործել տարածքային և ճյուղային տնտեսական կլաստերների ստեղծման և զարգացման ճանապարհով, որոնք կնպաստեն տնտեսության ճյուղերում ինովացիոն գործընթացների ակտիվացմանը, տեխնոլոգիական վերազինմանը, նոր արտադրությունների կազմակերպմանը, առանձին տարածաշրջանների առաջանցիկ զարգացմանը:

25. Բնակչության զբաղվածության և կենսամակարդակի բարձրացմանը կնպաստի քննարկման փուլում գտնվող «Արհեստագործության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը հիմքեր կստեղծի ոլորտի սուբյեկտներին իրավական դաշտ տեղափոխելու և ոլորտում իրավահարաբերությունները կանոնակարգելու համար: Օրենքի ընդունումից հետո նախատեսվում է արհեստագործության ոլորտի պետական աջակցության նպատակային ծրագրերի մշակում և իրականացում:

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտ

26. Այս ոլորտում 2007թ. զարգացմանն ուղղված միջոցառումների հիմքում ընկած կլինեն «Ստանդարտացման մասին», «Համապատասխանության գնահատման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները: Կատարվելիք աշխատանքների հիմնական նպատակն է լինելու Հայաստանի ստանդարտացման և համապատասխանության հավաստման համակարգերի ներդաշնակեցումը միջազգային նորմերին:

27. Մանավորապես, իրականացվող աշխատանքներն ուղղված կլինեն.

- արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը,
- սպառողների կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար վտանգավոր արտադրանքի քողարկման և ծառայությունների մատուցման կանխարգելմանը,
- ներմուծվող արտադրանքի և ծառայությունների անվտանգության ապահովմանը,
- արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների որակի բարձրացմանը,
- չափումների միասնականության ապահովմանը:

28. 2007թ. աշխատանքներ կիրականացվեն նաև սպառողական շուկայում իրացվող արտադրանքի և ծառայությունների որակի պետական վերահսկողության բնագավառում՝ ուղղված.

- տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին համապատասխանության ապահովմանը, խախտումների կանխարգելմանն ու վերացմանը,

- չափումների միասնականության ապահովման բնագավառում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված չափագիտական կանոնների ու նորմերի պահպանմանը, խախտումների բացահայտմանը և դրանց կանխարգելմանը:

Տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտի

29. Այս ոլորտում իրավական դաշտի կատարելագործման նպատակով 2007թ. մշակվելու են տեխնիկական անվտանգության կանոնակարգերը: Լիազոր մարմնի կողմից հավատարմագրվելու են տեխնիկական անվտանգության բնագավառում փորձաքննություն իրականացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր, ինչով կապահովվի տեխնիկական անվտանգության փորձագիտական ինստիտուտի ձևավորումը: Կիրականացվեն նաև համապատասխան միջոցառումներ պայթեցման աշխատանքների կատարմամբ զբաղվող կազմակերպությունների մասնագետների որակավորման ինստիտուտի ստեղծման ուղղությամբ:

Ներքին շուկայի պաշտպանության և մրցակցային դաշտ

30. Այստեղ 2007թ. կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- ոլորտը կանոնակարգող իրավական դաշտի համալրում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում, օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկման առավել արդյունավետ լծակների ներդրում,

- ներքին շուկայում հայրենական արտադրողների գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց վերացմանն ուղղությամբ աշխատանքների իրականացում,

- հայրենական արտադրողների գործունեության վրա ներմուծման հնարավոր բացասական ազդեցության բացահայտման նպատակով առանձին ապրանքների ներմուծման ծավալների և դրանց վոլիոխման միտումների ուսումնասիրությունների և վերլուծության իրականացում,

- հայրենական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ մրցակցային դաշտի ձևավորման և մենաշնորհային գործունեության չարաշահումների կանխարգելմանն ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Չրոսաշրջության ոլորտ

31. Չնայած տարածաշրջանում առկա որոշակի քաղաքական անկայունության՝ 2001թ. սկսած զբոսաշրջային այցերը Հայաստան պահպանվում են՝ ապահովելով կայուն միջին տարեկան աճ՝ 25 տոկոսի շրջանակներում, զուգահեռաբար ընդլայնելով այցելությունների աշխարհագրությունը: Արտաքին զբոսաշրջությանը զուգահեռ զարգանում է նաև ներքինը: 2007թ. զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության գերակայությունը կշարունակի հանդիսանալ համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի վարկանիշի բարձրացումը: Այս նպատակով կիրականացվեն ակտիվ գովազդային, տեղեկատվական, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

32. Կշարունակվեն աշխատանքներն՝ ուղղված զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործմանը, զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացմանը, զբոսաշրջային արդյունքի

մրցունակության բարձրացմանը, միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, զբոսաշրջության բնագավառում համագործակցության աշխարհագրության ընդլայնմանը, Ջբոսաշրջային Համաշխարհային Կազմակերպության հետ համագործակցության հետագա ամրապնդմանն ու ակտիվացմանը:

Գյուղատնտեսության ոլորտ

33. ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2007թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացմանն ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի ագրոպարենային ոլորտի հետագա զարգացմանն ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ կլինի հանրապետության անտառային տնտեսության պահպանմանն ու անտառների վերականգնման համալիր միջոցառումների իրականացումը:

34. Նախատեսվում է 2007թ. խորացնել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և տնտեսվարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների հստակ կանոնակարգում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,
- տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսվարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում,
- տարածաշրջանային և գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,
- կառուցվածքային և ֆունկցիոնալ բարեփոխումների իրականացում և կրթական, տեղեկատվական ու խորհրդատվական ծառայությունների ուժեղացում,
- գիտահետազոտական աշխատանքների ընդլայնում, նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում:

35. Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2007թ. պետական բյուջեով նախատեսվող ծախսերը կնպատակաուղղվեն գերակայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացմանը.

- բնական կերահանրակների բարելավում և ջրարբիացում,
- հակահեղեղային միջոցառումների իրականացման միջոցով հողերի բարելավում,
- տոհմա-սելեկցիոն և սերմնաբուծական աշխատանքների բարելավում, տոհմային գործի կազմակերպում, արհեստական սերմնավորման միջոցառումներ,
- մարզային անասնաբուժական լաբորատորիաների կարողությունների ուժեղացում,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ագրարային կանոններին համապատասխան ֆիտոսանիտարական և անասնաբուժական-հակահամաճարակային տեսչական վերահսկողության ապահովում,
- անտառային տնտեսության պահպանման և անտառների վերականգնման համալիր միջոցառումների իրականացում,
- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,

- գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսվարող սուբյեկտներին աջակցություն, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում:

36. Ագրոպարենային համակարգի զարգացման 2007թ. քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ, կմնա երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հանրապետության ագրարային հատվածում տնտեսվարման տարբեր ձևերի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գյուղացիական միավորումների և կոոպերատիվների ձևավորմանը, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման և այդ բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և տնտեսվարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

37. Իրականացվող ագրարային քաղաքականության և ներդրումային ծրագրերի կենսագործման արդյունքում 2007թ. կապահովվի գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 6 տոկոս աճ: Միաժամանակ, 2007թ. կանխատեսվում է գյուղատնտեսական մթերքների գների ինդեքսի 4.0 տոկոս տարեկան աճ:

Էներգետիկա

38. Իրականացվող պետական քաղաքականության նշանակետում պահպանվելու է ՀՀ և Եվրամիության օրենսդրությունների մոտարկման անհրաժեշտությամբ պայմանավորված էլեկտրաէներգետիկական շուկայի հետագա ազատականացման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման գործընթացի խորացումը, էներգահամակարգի զարգացման, ֆիզիկապես ու բարոյապես մաշված էներգատեղակայանքների սերնդափոխության խթանումը՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ:

39. Էներգետիկայի բնագավառի գործունեությունն ուղղված է լինելու հանրապետության էներգետիկ պահանջարկի բավարարմանը՝ շարունակելով ներկրվող (բնական գազ, միջուկային վառելիք, մագուր՝ որպես ռազմավարական պաշար) և տեղական էներգետիկ պաշարների (հիդրո, հողմային, արևի և այլն) տարատեսականցման և արտադրական հզորությունների առավելագույն օգտագործման գործընթացը:

40. Էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության թափանցիկության ապահովման տեսակետից կարևորվում է համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման և զարգացման գործընթացը:

41. ՀՀ 2007թ. պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կշարունակվեն հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգերի վերականգնում,
- Էլեկտրաէներգիայի հաղորդման հատվածի վերականգնում. «Ալավերդի-2» ենթակայանի վերագինում,
- Երևանի ՋԷԿ-ում համակցված ցիկլով գազատուրբինային ագրեգատի կառուցում,
- «Աջակցություն Հայաստանի էներգետիկ քաղաքականությանը» Եվրամիության SUSA ծրագրի շրջանակներում:

42. ՀՀ էներգետիկայի նախարարության ռեսուրսների հաշվին կշարունակվեն Հայկական ԱԷԿ-ում աշխատած վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի երկրորդ հերթի շինարարության աշխատանքները:

43. Կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

44. 2007թ. նախատեսվում են հանրապետության վառելիքամատակարարման ուղիների զանազանեցման, տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները.

- Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Սիսիան և Ջերմուկ-Արարատ հատվածների կառուցման մեկնարկում,

- մասնավոր կապիտալի ներգրավմամբ՝ ՀԷԿ-երի և հողմաէլեկտրակայանների կառուցման աշխատանքների իրականացում,

- Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ֆինանսական սխեմայի հստակեցում և նախապատրաստական աշխատանքների կազմակերպում,

- Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օղային գծի կառուցման աշխատանքների իրականացում,

- տարածաշրջանային համագործակցության ընդլայնում և խորացում, այդ թվում՝ Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման օղային գծի կառուցում և այլն:

45. ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության «ԳԱԶՊՐՈՄ» ընկերության միջև կնքված համաձայնագրով 2007թ. նախատեսված է մեկնարկել Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության ավարտական աշխատանքները:

46. Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի, դրանց կիրառման ապահովման մեխանիզմների մշակման ու ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման աշխատանքները:

47. Իրենց լիարժեք աշխատանքները կծավալեն Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամը, ինչպես նաև «Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ» Ծրագիրը:

48. Էներգախնայողության միջոցառումների աստիճանական ներդրման գործընթացի խրախուսման ուղղությամբ կմեկնարկի ՀՀ կառավարության կողմից հաստատված Էներգախնայողության Ազգային Ծրագրից բխող միջոցառումների իրականացումը:

49. 2007թ. **ջերմամատակարարման քնազավառում** կշարունակվեն համակարգի վերականգնման աշխատանքները: Այդ աշխատանքների արդյունքում իրենց լուծումը կստանան մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ, որոնցից են՝ ջերմամատակարարման ծառայությունների առևտրայնացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի զարգացումը, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների վերջնական ընտրությունը:

50. Այս աշխատանքների հաջող ընթացքին կնպաստեն հիմնականում «Ջերմամատակարարման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը և կիրառումը, Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի արդյունավետ գործունեությունը, մասնավորապես 2007

թվականին միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին նախատեսվում է քաղաքային դպրոցների ջեռուցման համակարգերի վերականգնում:

51. Հանրապետության **գազամատակարարման համակարգի** վերականգնման ու զարգացման աշխատանքներում նոր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կընձեռի արագացնել դրանց տեմպերը:

52. Ավարտական փուլ են թևակոխելու հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման և նոր գազաֆիկացման աշխատանքները: Այդ աշխատանքների իրականացման երաշխիք է հանդիսանալու ՀՀ պետությունից միջոցներից սահմանային բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներին տրամադրվող ֆինանսական օգնությունը:

Ջրային տնտեսության

53. Բնագավառում կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումը:

54. 2007թ. ընթացքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ կլինեն.

- համակարգերում կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը,
- ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը,
- ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը,
- համակարգերի շահագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը,
- մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրերի ներդրումը,
- ընկերությունների ինքնածախսածածկման ապահովման շարունակումը:

55. Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2007թ. ընթացքում անհրաժեշտ է շարունակել ներդրումները ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքի փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

56. ՀՀ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

- ապահովել Երևան քաղաքի շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը և նպաստել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում նույնատիպ գործընթացների աստիճանական ակտիվացմանը,
- ապահովել ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության ու Համաշխարհային բանկի միջև ֆինանսական համագործակցությունների շրջանակներում կնքված ներդրումային ծրագրերի իրականացումը,

- ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը,
- ապահովել հանրապետության խոշոր և միջին քաղաքների ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի ֆինանսական ռազմավարության լրամշակումը,
- խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև ոռոգման մասով նպաստել գյուղական ենթակառուցվածքների զարգացմանը,
- միջոցառումներ ձեռնարկել մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղությու-
ններով, այդ թվում՝
 - ա) սկսել աշխատանքները Սևանի ջրավազանի մի շարք բնակավայրերի (թվով 5) կեղտաջրերի մաքրման կայանների ներդրումային ծրագրի ուղղությամբ,
 - բ) Երևանի «Աէրացիայի» կոյուղու մաքրման կայանի վերականգնման համար Միջազգային համա-
գործակցության ճապոնական բանկի (JBIC) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի
հետ համատեղ վարել բանակցություններ,
 - գ) ապահովել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ Արմավիրի մարզի
կոյուղու մաքրման կայանի ներդրումային ծրագրի իրականացումը, մասնավորապես կոյուղու
համակարգի պարզարանային կայանի կառուցումը,
 - ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող հանրապետության շուրջ 600
համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանք-
ների նախապատրաստման համար ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության
(JICA) հետ իրականացնել համապատասխան աշխատանքներ,
 - Ասիական զարգացման բանկի (ADB) հետ ձևավորել ջրամատակարարման և ջրահեռացման
համակարգերի ներդրումային ծրագրերին մասնակցություն ունենալու ուղղությամբ ծրագրերի փաթեթը,
 - ոռոգման հատվածում իրականացնել ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,
 - աշխատանքներ իրականացնել Համաշխարհային բանկի ֆինանսավորման շրջանակներում
ոռոգման համակարգի ներդրումային նոր ծրագրի նախապատրաստման ուղղությամբ,
 - աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը,
 - նպաստել ջրառ իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև ջրօգտագործողների
ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների
միությունների ստեղծմանը,
 - իրականացնել աշխատանքներ Արվա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու
նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու-Դաբիի վարկային ծրագրի ներգրավման
ուղղությամբ,
 - շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը,
 - խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը,
գործուն մեխանիզմներ ստեղծել մատուցած ծառայությունների դիմաց վճարումների գանձման համար,
 - միջոցառումներ ձեռնարկել ընկերությունների տարիներով կուտակված պարտքերի մարման
ուղղությամբ,
 - իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում
ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ,

- իրականացնել աշխատանքներ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման ուղղություններով,

- իրականացնել աշխատանքներ գյուղական համայնքների խմելու ջրի նվազագույն մատակարարումն ապահովող խնդիրների և միջոցառումների, ինչպես նաև ջրային տնտեսության համակարգում սեփականության իրավունքի և շահագործման պատասխանատվության տարանջատման և իրականացման ենթակա հարցերի ուսումնասիրման ուղղություններով:

57. 2007թ. ընթացքում կշարունակվի խմելու և ոռոգման համակարգերը շահագործող ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը՝ աստիճանաբար կրճատելով սուբսիդավորման ծավալները: Այն պայմանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված քաղաքականության չհստակեցման հետ:

58. Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

59. Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որոնք կապահովեն դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

Տրանսպորտ և կապ

60. Բնագավառում 2007թ. ծրագրավորված տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ: Այդ նպատակին են ծառայելու 2007թ. պետական բյուջեում ընդգրկված պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը:

61. «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում ծրագրով» 2007թ. նախատեսվում է իրականացնել գարնանային հեղեղումներից քանդված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքները:

62. Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման ու շահագործման ծրագրով ՀՀ 2007թ. պետական բյուջեով նախատեսված միջոցներով կիրականացվեն 3110 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքներ:

63. 2007թ. ծրագրվել է նաև Սոթք-Մարտակերտ 110 կմ երկաթուղամբ և ՀՀ սահման-Ստեփանակերտ-Ասկերան 120 կմ ավտոճանապարհների շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացումը:

64. Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ փոսային նորոգումների և ձմեռային պահպանության, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների պահպանության աշխատանքների իրականացումը տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդարձնի ավելի դյուրին, անվտանգ և նվազ ծախսատար:

65. Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ ճանապարհային վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների և մի շարք այլ վթարավտանգ կամուրջների հիմնանորոգման աշխատանքներ:

66. 2007թ. կիրականացվեն ՀՀ ամբողջ տարածքում հաշվառման ենթակա ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների երկաթուղային տրանսպորտային միջոցների, թռչող և լողացող ապարատների ու սարքավորումների գույքագրման աշխատանքներ:

67. 2007թ. աշխատանքներ կտարվեն տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության գործընթացի կազմակերպման և համապատասխան կազմակերպություններին լիցենզիաներ տրամադրելու ուղղությամբ:

68. **Քաղաքացիական ավիացիայի** համակարգի 2007թ. զարգացման հիմնական ուղղությունները բխում են ՀՀ կառավարության ծրագրերից և թռիչքային ու ավիացիոն անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

69. Շահագրգիռ կողմերի հետ ակտիվորեն տարվել են քննարկումներ՝ օդային փոխադրումների քաղաքականության տարբեր հարցերի շուրջ և շարունակվում են մշակվել քաղաքականություններ և սկզբունքներ՝ ՀՀ ավիափոխադրողների շուկայում ավիաընկերությունների համար ներկա և ապագա ավիափոխադրողների կողմից ցանկալի անվտանգ ծառայությունների մատուցումը սպառողներին շահավետ պայմանների ստեղծման ուղղությամբ: Նշված պայմանների հիմքում դրված են պարզեցված ընթացակարգերի կիրառումը հստակ քաղաքականության շրջանակներում:

70. Օդային փոխադրումների ոլորտի 2007թ. գործունեության հիմնական ուղղություններն են.

- ՀՀ օդային փոխադրումների շուկայի կարգավորում և հայկական ավիափոխադրողների հետագա մրցունակության բարձրացումը,
- Եվրոպական երկրների Միացյալ ավիացիոն իշխանություններին (JAA) անդամակցության շրջանակներում ավիացիայի բնագավառում համատեղ ավիացիոն պահանջների ճանաչումը,
- «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ու գերատեսչական նորմատիվ ակտերի ձևավորումը,
- թռիչքների անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,
- ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,
- օդանավերի թռիչքային պիտանիության գնահատումը,
- օդանավակայանների սերտիֆիկացում և օդանավակայանների վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողությունը,
- ավիացիոն մասնագետների վկայագրումը և որակավորումը,
- օդային փոխադրումների կարգավորումը և լիցենզավորումը:

71. «Շիրակ» և «Ստեփանավան» օդանավակայաններից չվերթեր իրականացնող ավիաընկերությունների թվի ավելացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

72. ՀՀ տարածքում գրանցված ռադիոկապի տարբեր ցանցերի միաժամանակյա աշխատանքի ապահովման, շահագործվող Ռ-ԷՄ-երի և Բ-ՀՄ-ների տեխնիկական պարամետրերի փորձաքննության, **կապի և ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում** խորհրդատվական ծառայությունների մատուցման, Ռ-ԷՄ-երին հատկացվող անհրաժեշտ հաճախությունների (կապուղիների) համապատասխան մարմին-

ների հետ համաձայնեցման և միջազգային իրավական պաշտպանության ապահովման, ռադիոխան-
գարումների և տեսչավորման արդյունքում ներկայացված տվյալների, չափումների արձանագրու-
թյունների, ՌԷՄ-երի էլեկտրամագնիսական համատեղելիության փորձաքննություն և հաճախութ-
յունների օգտագործման հնարավորության անհրաժեշտ հաշվարկների կատարման նպատակով «Հեռա-
հաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի իրականացման
համար 2007թ. կհատկացվի 470.0 մլն դրամ:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

73. Տարածքային կառավարման համակարգի նպատակն է բարձրացնել մարզպետարանների և
տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող հանրային
ծառայությունների մակարդակը, այդ մարմինների գործունեության թափանցիկության ապահովումը,
քաղաքացիական հասարակության մասնակցությունը և, որ ամենակարևորն է, ֆինանսական միջոցների
առավել արդյունավետ օգտագործումը:

74. Համայնքների որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և ծախսերը նվազեցնելու նպատակով օրեն-
քով սահմանված կարգով ստեղծվելու են միջհամայնքային միավորումներ:

75. ՀՀ կառավարությունն ընդունել և իրագործել է տարածքների զարգացմանն ուղղված մի ամբողջ
շարք ծրագրային որոշումներ: Հատկապես ուշադրության կենտրոնում է եղել և հատուկ հոգածության
առարկա է հանդիսացել սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ
հիմնախնդիրների հայեցակարգային ծրագիրը: Մշակվել և իրագործվել են Մեղրու տարածաշրջանի,
Տավուշի և Արագածոտնի մարզերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրերը:

76. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումով պայմանավորված՝ կշարունակվեն
իրականացվել համալիր միջոցառումներ օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովելու ուղղությամբ:

77. Մինչև 2008թ. վերջը պետք է ավարտվի «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ
Թագավորության կառավարության և ՀՀ կառավարության միջև ծրագրային ֆինանսական օգնության
մասին» հուշագրի համաձայն, զարգացման ծրագրերով նախատեսված դրամաշնորհային ծրագիրը:

78. ՀՀ կառավարության կողմից մշակվել և ներկայումս ՀՀ Ազգային Ժողովում քննարկվում է
«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի
բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի
նախագիծը, որի ընդունմամբ հնարավորություն կընձեռվի սկսած 2007թ. օրենսդրական հիմքերի վրա
դնել համայնքի բյուջեի եկամուտների կորուստների չափերի և դրանց փոխհատուցման գումարների
հաշվարկման գործընթացը:

Քաղաքաշինություն

79. Քաղաքաշինությունը՝ լինելով երկրի տարածքային կազմակերպման ու զարգացման, ազգա-
բնակչության, արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակա-
վայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ընդգրկում է տարած-
քային պլանավորման, բնակավայրերի կայուն զարգացման և ճարտարապետության, բնակարանային-
կոմունալ տնտեսության, շինարարության և շինհնդուստրիայի, բնական և տեխնածին երևույթներից
տարածքի պաշտպանության ոլորտները:

80. 2007թ. քաղաքաշինական քաղաքականության բնագավառում շարունակվելու է համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը՝ համատեղված գոտիավորման փաստաթղթերի հետ, որը ելնելով համայնքի զարգացման ծրագրից՝ տարածքային ռեսուրսների համալիր վերլուծության հիման վրա հիմնավորում և սահմանում է համայնքի տարածքային զարգացման ուղղությունները, որոշում սոցիալական, մշակութային, արդյունաբերական, գյուղատնտեսական, բնապահպանական, ինժեներական և տրանսպորտային համակարգերի տեղադրման ու զարգացման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, բնական լանդշաֆտների, պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումները, ինչպես նաև տարածքի իրացման և կառուցապատման հերթականությունը պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման պայմանների պարտադիր պահպանմամբ:

81. Բնագավառի ռազմավարական ուղղությունների խնդիրների կարգավորման նպատակով կարևորում է ՀՀ պետական քաղաքաշինական կադաստրի ձևավորման անհրաժեշտությունը:

82. ՀՀ պետական քաղաքաշինական կադաստրը պետական տեղեկատվական համակարգ է, որը հիմք է ծառայում պետական քաղաքաշինական քաղաքականության, տարածքային զարգացման ռազմավարության, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, քաղաքաշինական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

83. Պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման և վարման պետական ծրագրի նպատակն է ՀՀ ողջ տարածքում պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման և վարման, մոնիթորինգի անցկացման միջոցառումների իրավական սպահովումը, իրավական նորմատիվ և մեթոդական միասնական բազայի ստեղծումը:

84. **Շինարարության** ոլորտում 2007թ. ընթացքում նախատեսվում է շարունակել ՀՀ հանրակրթական դպրոցների շինարարության, հիմնանորոգման և բարելավման ծրագիրը, որը կնպաստի Հանրապետությունում գոյություն ունեցող դպրոցների վերազինման և կրթական մակարդակի էական բարձրացմանը:

85. Նախատեսվում է իրականացնել «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում և բարելավում» համալիր ծրագիր, որի իրականացման արդյունքում ակնկալվում է մշակութային կյանքի զարգացում, ինչը կնպաստի բնակչության համար անհրաժեշտ ժամանցի վայրերի ստեղծմանը, հասարակության կենսամակարդակի բարձրացմանը:

86. Նախատեսվում է իրականացնել աշխատանքներ «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում, որի իրականացման արդյունքում ակնկալվում է արդի առողջապահական համալիրի ստեղծում և բարձրորակ ծառայությունների (բուժօգնության) մատուցման համար համապատասխան պայմանների ստեղծում:

87. 2007թ. ընթացքում նախատեսվում է շարունակել նաև քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (շինարարական նորմերի, ձեռնարկների, ստանդարտների, կանոնների և այլ փաստաթղթերի) մշակման աշխատանքները: Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազան համալրելու նպատակով փաստաթղթերի մշակման աշխատանքները տարվելու են ինչպես հանրապետական, այնպես էլ միջպետական մակարդակով ԱՊՀ երկրների հետ համագործակցության շրջանակներում:

88. 2007թ. նախատեսվում է շարունակել բնակարանային ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, բնակարանային տնտեսության գծով փախստական ընտանիքների բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով և գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագրերը:

89. 2007թ. բնակարանային ոլորտում շարունակվելու են աշխատանքներ՝ ուղղված բնական և տեխնածին աղետների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման ուղղված աջակցության ծրագրերի իրականացմանը:

90. Բնակապահովման ծրագրերի շրջանակներում նախատեսվում է պետական միջամտությամբ հնարավորություն ընձեռել լուծելու 1998-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած փախստական ընտանիքների, ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում 1988թ. երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, Գյումրի և Սպիտակ քաղաքներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, ինչպես նաև սողանքավտանգ գոտիներում 4-րդ և 5-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները: Բնակապահովման ծրագրերի շրջանակներում պետական միջամտության կարիք ունեցող քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծումը նախատեսվում է անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու կամ շուկայից բնակելի տուն ձեռք բերելու համար հասցեագրված պետական անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ աջակցություն ստանալու հավակնողների հիմնավորված ընտրության և նվազագույն ստանդարտներին համապատասխանող բնակտարածությամբ ապահովման մոտեցման կիրառմամբ:

Ադրաբայի օրենսդրության կատարելագործում

91. 2007թ. ՀՀ կառավարությունը շարունակելու է օրենսդրության կատարելագործման աշխատանքները: Դրանց ուղենիշ են հանդիսանալու ՀՀ փոփոխված Սահմանադրությունը և ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև Եվրամիության օրենսդրությանը ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման ազգային ծրագիրը:

92. 2007թ. կնախաձեռնվի արմատական նշանակություն ունեցող մի խնդրի համակարգային լուծումը, որը կապված է իրավաբանական միասնական տերմինաբանության մշակման ու կիրառման հետ: Դա հիմք կհանդիսանա օրենսդրական հակասությունների, անհստակությունների, անճշտությունների և երկիմաստ շարադրանքի վերացման համար, ինչի անհրաժեշտությունը, մասնավորապես, ընդգծված է ԱՀՌԾ-ում:

93. Թե օրենսդրական և թե իրավակիրառական բնագավառներում զարգացումը պետք է գնա տնտեսական դաշտում մրցակցության ուժեղացման և գործարարության միջավայրի բարելավման ուղղությամբ:

94. Դատախրավական բարեփոխումների 2-րդ փուլը, սկզբնավորվելով 2006թ.-ին, 2007թ.-ին արդեն իսկ իր պրակտիկ ազդեցությունը կունենա հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման վրա՝ նպատակ ունենալով արդյունավետ և հասարակության համար մատչելի դատական համակարգի ձևավորումը՝ ԱՀՌԾ նպատակներին համահունչ: Հիմնականում կավարտվի դատական համակարգի նոր կառուցվածքի վերջնական ձևավորումը, դատարանների կողմից

հասարակությանը մատուցվող ծառայությունների որակական հենքի ստեղծումը: Կսկսեն գործել վարչական և անվճարունակության գործերով մասնագիտացված դատարանները:

95. Գատական կորպուսի համալրման նպատակով կձևավորվի Գատական դպրոցը, որը կիրակա-նացնի որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը, ինչպես նաև գործող դատավորների պարբերական վերապատրաստումը:

96. Գատական համակարգի շրջանակներում ձևավորվելու է ինքնակառավարման մարմինների կուռ համակարգ՝ բաղկացած Գատավորների ընդհանուր ժողովից և Գատարանների նախագահների խորհրդից, ինչը կերաշխավորի դատական իշխանությանն առնչվող հարցերին գործադիր իշխանության միջամտության բացակայությունը: Գատական ծառայության կառավարման միասնականությունը կապահովվի պետական կառավարչական հիմնարկ հանդիսացող Գատական դեպարտամենտի շրջանակներում:

97. 2007թ. և հետագա տարիներին դատախիրավական բարեփոխումների երկրորդ փուլի նպատակների կատարման համար 2007թ. կսկզբնավորվի Համաշխարհային բանկի աջակցությամբ ֆինանսավորվող դատախիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի իրականացումը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է իրականացնել դատարանների շենքերի վերակառուցում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նոր շենքերի կառուցում, դրանց կահավորում, համակարգչային և այլ սարքավորումներով համալրում: Ջուգահեռաբար կիրականացվեն նաև դատախիրավական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք ուղղված են ամբողջ դատական համակարգի ամրապնդմանը և բարելավմանը, դատական համակարգում շրջանառվող տեղեկատվական միասնական շտեմարանի ստեղծմանը, ԴԱՀԿ ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների կիրառմանը, իրավական տեղեկատվության մատչելիությանը և հանրային իրազեկությանը: Գատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ծառայությունում նախատեսվում է ներդնել կատարողական վարույթների ավտոմատացված կառավարումն ապահովող համակարգչային ծրագիր:

98. 2007թ. կսկսվեն «Պաշտոնական հայտարարություններ» ինտերնետային էջի ստեղծման աշխատանքները, որի նպատակն է ունենալ պաշտոնական հայտարարությունների մշտապես հասանելի կենտրոնացված տեղեկատվական պաշար, որի վարումն իրականացվում է պետության անունից՝ դրանով վկայելով տեղեկատվության ծագումը որոշակի աղբյուրից և անխոչընդոտ ու անվճար հասանելիությունը ինտերնետային ցանցում: Ներկայումս, պաշտոնական հայտարարությունները տպագրվում կամ հաղորդվում են զանգվածային լրատվության տարբեր միջոցներով և ոչ միշտ են հասանելի ու ենթակա վերահսկողության հանրությանը:

99. 2007թ. կշարունակվի քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը՝ նպատակ ունենալով ապահովելու.

- գոյություն ունեցող ենթակառուցվածքների և նրանց նյութական բազայի կատարելագործումը, օրենսդրությամբ նախատեսվող նոր պատժատեսակների կիրառման համար շինությունների կառուցումը և առկա շինությունների վերակառուցումը,

- պատժի կրման պայմանների և կարգի հետագա հումանիզացումը միջազգային իրավական չափանիշներին համապատասխան, դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների առավել լիարժեք պաշտպանությունը, նրանց պահելու պայմանների բարելավումը, դատապարտյալների բուժապասարկման և զբաղվածության կազմակերպման հիմնախնդիրների լուծումը.

- դատապարտյալների ուղղման, սոցիալական վերականգնման (սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիա) համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ այդ գործին հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների ներգրավմամբ:

Արտաքին քաղաքականություն

100. ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակներն են.

- երկրի անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության և ժողովրդավարության հաստատումը, պետությունների միջև իրավահավասար և գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը, լարվածության օջախների հնարավոր բռնկումների կանխարգելումը, ԼՂ խնդրի խաղաղ կարգավորումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,

- երկրի հարաճուն զարգացումը, տնտեսական առաջընթացը, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումը, ժողովրդավարական բարեփոխումների անցկացմանը, մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար բարենպաստ արտաքին պայմանների ձևավորումը:

101. ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում գերակայող ուղղություններ են՝ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի ամրապնդումը և հետագա զարգացումը, Եվրոպական կառույցներում Հայաստանի լիարժեք ինտեգրումը, անվտանգության բաղադրիչների ամրապնդումը:

102. **Տնտեսական գործոնի** ակտիվացումն իր արտահայտությունն է գտել Հայաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր մոտեցումների մշակման ընթացքում և անվտանգության գործոնին զուգահեռ գերակայություն է ստանում հարաբերությունների խորացման, որոշումների ընդունման և դրանց իրագործման առումներով:

103. Հայաստանի տնտեսական անվտանգության, տնտեսական առաջընթացի համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովման, տնտեսական զարգացման աճի վերջին տարիների բարձր տեմպերի պահպանման առաջնահերթ հիմնախնդիրներն են արտաքին աշխարհին կապող տրանսպորտային, էներգակիրների տեղափոխման երթուղիների անխափան գործարկումը, դրանց տարբերազատումը (դիվերսիֆիկացումը), արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովումը, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնումը և նվաճումը, արտաքին ներդրումների ապահովումը:

104. **Եվրոպական ինտեգրացման** գործընթացներին Հայաստանը միացել է՝ անդամակցելով Եվրոպայի խորհրդին և Եվրոպական Միության հետ կնքելով Գործընկերության ու համագործակցության պայմանագիր: Հայաստանը շարունակում է հետևողականորեն իրականացնել ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կայացմանը, եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումներ, պետությունների Եվրոպական ընտանիքին լիարժեքորեն անդամակցելու ծրագրեր: Այս ամենին նոր երանգ է հաղորդելու Հայաստանի ակտիվ մասնակցությունն ու գործունեությունը ԵՄ «Նոր հարևանության» ծրագրի շրջանակներում:

105. **Անվտանգության քաղաքականության** ամրապնդումը ենթադրում է Հայաստանի ակտիվ գործունեություն բոլոր ձևաչափերով՝ գործնական ներգրավում ունենալով ինչպես բազմակողմ մասնավորապես ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, այնպես էլ Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Հունաստան և այլ երկկողմ ուղղություններով:

106. Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններն ունենալու են լրացուցիչ շփումներ, անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

107. Նշված խնդիրներն իրականացնելու և համակարգի նորմալ գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական նոր զարգացումները:

108. ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում ակտիվ մասնակցությունը միջազգային կազմակերպություններում, ինչը հատկապես կարևորվում է միջազգային կազմակերպությունների դերի օրըստօրե նկատվող աճով: Այս կապակցությամբ առաջնային է դառնում աշխատանքների ակտիվացումը այն կազմակերպություններում, որոնցում հնարավոր է արդյունավետ և նպատակալաց քարոզչության անցկացումը և համարժեք դիվիդենտների ձեռքբերումը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով Ադրբեյջանի կողմից միջազգային կազմակերպություններում տարվող հակահայկական քարոզչության կտրուկ աճը, անհրաժեշտություն է ծագում ժամանակին և պատշաճ հակաքարոզչություն վարելու:

109. Նշված խնդիրներն իրականացնելու և համակարգի նորմալ գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել դեսպանընկալ երկրներում ընթացող նոր տնտեսական զարգացումները:

Կրթություն և գիտություն

110. 2007թ. կապիտանվի կրթության ոլորտի միջնաժամկետ ծախսային գերակա վիճակը՝ որպես տնտեսության առաջընթացի առաջնային գրավական:

111. Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես՝ 2005թ. կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 2.53 տոկոսը՝ 2004թ. 2.33 տոկոսի դիմաց, իսկ 2006թ.՝ 3.23 տոկոս (ՏՀԶԿ երկրներում կրթությանն ուղղված պետական ծախսերը միջինում կազմում են ՀՆԱ-ի 4.7 տոկոսը):

112. Միևնույն ժամանակ, ըստ կրթության տարբեր մակարդակների պետական միջոցների բաշխման կառուցվածքը համեմատելի է ՏՀԶԿ երկրների ցուցանիշներին: 2005թ. կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների շուրջ 84.4 տոկոսն ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 12.5 տոկոսը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը, 2006թ. համապատասխանաբար՝ 85.3 և 11.0 տոկոս, ՏՀԶԿ երկրների 72 և 20 տոկոսի դիմաց:

113. Հանրակրթության ոլորտի հիմնական գերակայություն են շարունակում մնալ.

- կրթության բովանդակային բարեփոխումը, նորմատիվ դաշտի բարելավումը,
- աշխատավարձերի բարձրացումը,
- մանկավարժական կադրերի վերապատրաստումների իրականացումը, մեթոդական սպասարկումը,
- վերապատրաստումների իրականացումը մարզերում,

- 12-ամյա կրթության և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի մշակումն ու ներդրումը:

114. Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն մնալ նաև հանրակրթության անբաժանելի մաս կազմող **հասուն կրթության համակարգը**, որի բարեփոխումների ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հասուն մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումն առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

115. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության վարկային ծրագրի շրջանակներում 2007թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ծրագրի «Կրթակարգ և գնահատում» բաղադրիչի շրջանակներում՝
- օտար լեզուներ, արվեստ, սպորտ, ՆԶՊ, տեխնոլոգիա առարկաների նոր չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և փորձնական տարբերակների հրատարակում,
- բնագիտական և հասարակագիտական առարկաների ընթացիկ գնահատման թեստերի փորձնական մոդուլների մշակում, փորձարկում և վերջնական մոնիթինգների հրատարակում,
- օտար լեզուների ընթացիկ գնահատման թեստերի փորձնական մոդուլների մշակում, փորձարկում և վերջնական մոնիթինգների հրատարակում,
- TIMSS 2007 միջազգային ստուգատեսի հիմնական փուլի անցկացում,
- բուհերի ընդունելության չափանիշների և ուղեցույցի մշակում և հրատարակում:
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում» բաղադրիչի շրջանակներում՝
- հանրապետության և 300 հանրակրթական դպրոցների զեղչային պայմաններով համակարգչային սարքավորումների տրամադրում,
- դպրոցական ինտերնետ պորտալի մշակում և գործարկում, կրթության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, ուսուցիչների համար յուրաքանչյուր առարկայի կտրվածքով անհրաժեշտ մեթոդական նյութերի մշակում և տեղադրում, ինչպես նաև դպրոցների միջև կապերը ամրապնդելու նպատակով տարբեր ինտերակտիվ ծառայությունների մատուցում,
- ինտերնետ ցանցին ևս 100 հանրակրթական դպրոցների միացում ,
- «Ուսուցիչների վերապատրաստում» բաղադրիչի շրջանակներում՝
- բնագիտական և հասարակագիտական առարկաներից ուսուցչի ձեռնարկների մշակում և տպագրում,
- բնագիտական և հասարակագիտական առարկաների և օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման նյութերի մշակում,

- բնագիտական և հասարակագիտական առարկաների կենտրոնական դասախոսների վերապատրաստում միջազգային փորձագետի կողմից,

- բնագիտական և հասարակագիտական առարկաների կենտրոնական և տեղական դասախոսների վերապատրաստման սեմինարների կազմակերպում,

- օտար լեզուների կենտրոնական դասախոսների վերապատրաստման սեմինարների կազմակերպում,

- բնագիտական և հասարակագիտական առարկաների ուսուցիչների վերապատրաստում ԿԱԻ-ի կենտրոնների միջոցով,

- հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների վերապատրաստում համակարգչային ուսումնական ծրագրերի գծով,

- ուսուցիչների վերապատրաստում համակարգչային գրագիտության ուղղությամբ,

- ուսուցիչների վերապատրաստում համագործակցային ուսուցման ուղղությամբ,

- ԿԱԻ-ի մարզային կենտրոնների շենքերի վերանորոգում,

- դպրոց-կենտրոնների դրամաշնորհների միջոցով ուսուցիչների վերապատրաստումների շարունակում,

- «Օժանդակություն բարեփոխումներին» բաղադրիչի շրջանակներում`

- 400 դպրոցի տնօրենների վերապատրաստում ընթացող բարեփոխումների գծով,

- բարձրագույն կրթության բարեփոխումների ներդրման մեխանիզմների մշակում,

- 2006-2007 ուստարվա հանրակրթության տվյալների տպագրում,

- 2007-2008 ուստարվա տվյալների հավաքագրում, մուտքագրում և վերլուծություն,

- կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) բազայի վերանայում, տեխնիկական սպասարկում և մասնագետների վերապատրաստում,

- ԿԿՏՀ համակարգչային վերազինում:

116. Հաշվի առնելով այս գործոնները` առաջիկա տարիներին ևս կրթության բնագավառում պետության հիմնական գերակայություն է հանդիսանալու հանրակրթության ոլորտը, որին էլ կուղղվեն կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը:

117. Հատուկ ուշադրություն է պահանջում Սփյուռքի հայկական դպրոցները դասագրքերով ապահովման խնդիրը: Այն հանդիսանում է Հայաստան-Սփյուռք քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

118. Նախատեսվում է Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը` 2007թ. 50 ուսուցիչ:

119. Կշարունակվի յուրաքանչյուր տարի պետական ԲՈՒՀ-եր 70-ական սփյուռքահայ դիմորդների ընդունելություն:

120. 2007թ. նախատեսվում է արտադպրոցական կրթական հիմնարկների տարբեր տեսակների զարգացում, կրթության բովանդակության բարելավում.

- ըստ հետաքրքրությունների դպրոցականների պահանջարկի բավարարում,

- լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում,

- հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման դասաժամերի ավելացում (շաբաթական 3 ժամ` նախկին 2 ժամի փոխարեն):

121. Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ պետությունը, դրանով իսկ բավարար հիմքեր է ստեղծում մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով հավասարության խնդիրներին:

122. Համաձայն ԱՀՌԾ-ի, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառները դիտվում են նպատակների երկրորդ մակարդակում: 2007թ. այս ոլորտներում քաղաքականության հիմնական նպատակներն են շուկայական տնտեսությանը համապատասխանության ապահովումը, որակի բարձրացումը և միջազգային չափանիշներին համադրելիությունը, մատչելիության և հավասարության բարձրացումը:

123. Առաջիկա տասնամյակում ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության զարգացումները պայմանավորված են լինելու Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրվելով: 2006-2007 ուսումնական տարվանից ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կներդրվի ուսման կազմակերպման կրեդիտային համակարգ, ինչպես նաև ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը:

124. 2007թ. նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովել նշված ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացումը, համակարգի արդյունավետության բարձրացումը:

125. Մասնավորապես նախատեսվում է՝

- բարձրացնել ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը՝ 2007թ. 27 տոկոսով: Նույն տոկոսով կբարձրացվի նաև վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը, իսկ ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմինը՝ 9.18 տոկոսով: Բարձրացման արդյունքում 2007թ. ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը (ներառյալ լրացուցիչ վարձատրությունները) կհասցվի 74.0 հազար դրամի, վարչական անձնակազմինը՝ 76.3 հազար, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմինը՝ 23.1 հազար դրամի ,

- ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով,

- ապահովել դպրոցները աշակերտական սեղան-նստարաններով, գրատախտակներով,

- 2007թ. բարձրացնել հատուկ դպրոցներում սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը՝ 20 տոկոսով՝ միաժամանակ գիշերօթիկ դպրոցներում սովորող և նոր ընդունվող երեխաների թիվը համապատասխանեցնելով տվյալ հաստատության տիպի համար սահմանված չափանիշներին,

- ապահովել հատուկ դպրոցներին անվճար ծրագրերով, դասագրքերով, ձեռնարկներով և ուսումնական այլ նյութերով:

126. Արդյունավետության բարձրացման ուղղությամբ հանրակրթության ոլորտում, մասնավորապես, նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- աշակերտ/ուսուցչական դրույք և աշակերտ/ոչ ուսուցիչ հարաբերակցությունների բարձրացում՝ հասցնելով 2007թ. 14.03 և 23.29,

- դասարանների միջին խտությունը կլինի 21.77,

- կրթական չափորոշիչների փոփոխությունը, ուսուցման նոր մեթոդների ներդրումը, ուսումնական նոր նյութերի անհրաժեշտությունը, որոնց հետ կապված ավելանում են ուսուցիչներին հատկացվող նոր նյութերի ստեղծման և ծառայությունների իրականացման ծախսերը:

127. 2007թ. ընթացքում հանրակրթության հիմնական առարկաների մոտ 8000 ուսուցիչներ կվերապատրաստվեն նոր առարկայական ծրագրերի և գնահատման նոր համակարգի կիրառման ուղղությամբ:

128. Հանրակրթական դպրոցների ինտեգրետային ցանցի սպասարկումը 2007թ.-ից պետք է իրականացվի արդեն 480 դպրոցների համար:

129. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերը 2007թ. կբարձրացվեն 20 տոկոսով՝ այն հասցնելով 36.0 հազ. դրամի: Ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի, ինչպես նաև բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթական հաստատություններում աշխատողների միջին ամսական աշխատավարձերը նույնպես 2007թ. կբարձրացվեն 20 տոկոսով՝ միաժամանակ ապահովելով հանրապետության 2007թ. 20.0 հազ. դրամ նվազագույն աշխատավարձը:

130. **Գիտության ոլորտի** հիմնական նպատակն է ՀՀ տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը, համաշխարհային ընկերակցության մեջ երկրի կայուն տեղն ապահովելը:

131. Ինտեգրման գործառույթների իրականացման համար պետության առջև լուրջ խնդիրներ են հառնում գիտության նոր մոդելի, ֆինանսավորման նոր մեխանիզմների, միմյանց կրկնող գիտական հաստատությունների կազմակերպչական նոր մոտեցումների մշակման և իրականացման տեսակետից:

132. Ելնելով վերոհիշյալից՝ 2007թ. գերակայությունները հետևյալն են՝

- գիտական ոլորտի բարեփոխումները,
- գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացում,
- գիտական ներուժի վերարտադրություն,
- մշտական գործող անկախ փորձագիտական կառույցի ստեղծում,
- գիտատեխնիկական տեղեկատվական և վերլուծական կենտրոնի աշխատանքների համակարգված կազմակերպում:

133. Համաձայն «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի, պետությունը յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ:

134. 2007թ. կկիրառվի համաֆինանսավորման սկզբունքը, որով մասամբ կհաղթահարվի պետական բյուջեից գիտությանը հատկացվելիք սուղ միջոցների խնդիրը:

Առողջապահություն

135. Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

136. Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում որդեգրվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն

սահմանված հետևյալ հիմնարար արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, առողջության պահպանման գործում կառավարության և անհատների նոր դերի սահմանում, այդ գործընթացում պատասխանատվության տարանջատում, սովերային գործունեության վերացում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և, հնարավորության դեպքում, լրացուցիչ միջոցների ընդգրկում:

137. Առողջապահության ոլորտի զարգացման դինամիկ քաղաքականության ապահովման նպատակով կարևորագույն հիմնախնդիր է դիտվում բնագավառի օրենսդրական դաշտի բարելավումը: Այդ նպատակով առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը հիմնականում կանոնակարգող «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

138. Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, այդ թվում՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

139. Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության գերակայող ռազմավարություններն են.

- բնակչության մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը,
- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը,
- մոր և մանկան առողջության ապահովումը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը,
- դեղորայքային ապահովումը,
- տեղեկատվական համակարգի կատարելագործումը,
- պետական ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման ու ֆինանսական այլ հոսքերի արդյունավետ կառավարման ապահովումը:

140. Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական ավելացման պայմաններում առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ոլորտում առկա ֆինանսական հոսքերի կանոնակարգումը և բուժօգնության որակի ու մատչելիության բարձրացումը:

141. Ելնելով այն իրողությունից, որ առողջապահության ոլորտում գործող բուժկազմակերպություններն իրենց թվաքանակով, հզորություններով, կադրային ներուժով զգալիորեն գերազանցում են (այդ թվում՝ պետության կողմից երաշխավորված ծրագրերով ձևավորված) պահանջարկը՝ առաջիկա տարվա

ընթացքում ևս կշարունակվի 2001թ. սկսված առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացի խորացումը:

142. Առկա ռեսուրսների առավել նպատակաուղղված և արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է արմատավորել և ընդլայնել պետական պատվերի տեղադրումը ընտրանքային եղանակով:

143. Ներդրվում է ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար կփոխարինի գոյություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգին: Առաջիկա տարիներից կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության քաղաքականությունը: Սկսած 2006թ.՝ ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում իրականացվում է անվճար բուժօգնությունը տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների և նեղ մասնագետների կողմից՝ ամբողջ բնակչության համար, անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, առանց այցելությունների սահմանափակման, ինչպես նաև՝ ըստ բժշկական ցուցումների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը:

144. Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա: Աղքատների համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

145. Հատուկ ուշադրություն է դարձվելու գյուղական մակարդակում բուժօգնության առաջնային համակարգի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է արդեն սկսված գյուղական ամբուլատորիաների վերանորոգումն ու ժամանակակից սարքավորումներով վերազինումը:

146. Կանանց և երեխաների առողջության պահպանմանը, այդ թվում՝ վերարտադրողական առողջության համարժեք ուշադրության ցուցաբերումը, սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու, հետևաբար՝ բնակչության առողջական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման տեսանկյունից: Այդ նպատակով անհրաժեշտ է վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունն ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության և սնուցման բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործումը, այդ թվում՝ կրճքով սնուցման խրախուսումը, հղիների նախածննդյան խնամքի և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը:

147. Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

148. Շարունակական գործընթացի համատեքստում առողջապահության բյուջեի սոցիալական ուղղվածության բնորոշումը կապահովի երկրում աղքատության աստիճանը որոշող հատուկ

համակարգի ներդրմամբ պայմանավորված բուժօգնության հասցեագրված ֆինանսավորման իրականացումը:

149. Գեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը լինելու է դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացումը: Մոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլյոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդների դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիապանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

150. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համարյա բոլոր բուժկազմակերպություններում (հատկապես մարզերում) տասնյակ տարիներ օգտագործվող բժշկական տեխնիկան ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության, ինչը խիստ բացասական է անդրադառնում բուժական պրոցեսի կազմակերպման վրա: Բուժկազմակերպությունների բժշկական սարքավորումների վերազինման, բուժտեխնիկայով հագեցվածության, բուժական և ախտորոշման գործընթացի բարձրացման նպատակով նախատեսվում է բժշկական ժամակակից սարքավորումների ձեռքբերում (կենտրոնացված միջոցներով), որոնք հավասարաչափ կբաշխվեն մարզերում գործող՝ թե ամբուլատոր-պոլիկլինիկական օդակի, թե հիվանդանոցային համակարգի բոլոր բուժհաստատությունների միջև:

151. Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտում

152. 2007թ. հիմնական քաղաքականությունը միտված է լինելու սոցիալական հիմնահարցերի լուծմանը՝ տնտեսության զարգացման միջոցով ապահովելով բնակչության սոցիալապես խոցելի խմբերի առավել արդյունավետ պաշտպանությունը և սոցիալական աջակցության մատչելիությունը:

153. Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտում քաղաքականության իրականացման գործընթացում կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես, կշարունակվեն աշխատանքները Աշխատանքի միջազգային կազմակերպության ընդունած կոնվենցիաներին միանալու և Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի պահանջներն ապահովելու ուղղությամբ:

154. **Աշխատանքային իրավահարաբերությունների բնագավառի** օրենսդրությունը 2007թ. ընթացքում կհամապատասխանեցվի Եվրամիության ստանդարտներին, ինչը կնպաստի աշխատանքի պայմանների բարելավմանը՝ աշխատողների անվտանգության, առողջության և իրավունքների պաշտպանությանը, աշխատանքի վայրում ռիսկայնության գործոնի նվազեցմանը:

155. **Աշխատավարձի քաղաքականության բնագավառում** մշակվում է հանրային ծառայողների վարձատրության ռազմավարությունը՝ այդ ոլորտում ընդգրկված աշխատողների աշխատավարձերի կանոնակարգման նպատակով: 2007թ. քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կսահմանվի 35,5 հազ. դրամ՝ 2006թ. 30,0 հազ. դրամի փոխարեն, հարկադիր

կատարողներին՝ 42,0 հազ. դրամ՝ 2006թ. 35,0 հազ. դրամի փոխարեն, իսկ հարկային և մաքսային ծառայողներին՝ 55,0 հազ. դրամ, ինչպես նաև կներդրվի տարիֆային համակարգ, որով կսահմանվի աշխատանքի վարձատրության նվազագույն պայմանները, չափը, տարիֆային և որակավորման պահանջները:

156. 2007թ. նախատեսվում է նաև նվազագույն ամսական աշխատավարձի չափը 15,0 հազար դրամից բարձրացնել մինչև 20,0 հազ. դրամ:

157. Ջրադիվաժության բնագավառում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ՝ ուղղված բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանը, աշխատաշուկայում լարվածության մեղմացմանը և անմրցունակ խնբերին պատկանող անձանց սոցիալական երաշխիքների տրամադրմանը:

158. Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում 2007թ. կառավարության գործունեության համար առաջնահերթ խնդիրներից կշարունակվեն մնալ կենսաթոշակային բարեփոխումները, որոնց շրջանակներում հիմնական աշխատանքները կկատարվեն անհատական (անձնավորված) հաշվառման և անհատականացված հաշվետվությունների համակարգի ամբողջական ներդրման ուղղությամբ:

159. ՀՀ կառավարությունը կշարունակի ՄԺԾԾ-ի շրջանակներում կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացումը՝ ի հաշիվ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի: Միաժամանակ, Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերի կենսաթոշակին տրվող լրացուցիչ հավելումը կբարձրացվի ամսական 20.0 հազար դրամի չափով:

160. Սոցիալական ապահովագրության բնագավառում շարունակական բնույթ կկրի ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակումն ու վճարումը կանոնակարգող օրենսդրության կատարելագործումը՝ հաշվի առնելով Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի դրույթները:

161. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում կշարունակվի համակարգի թվով 8 մանկատների՝ առանց ծնողական խնամքի մնացած 935 երեխաների շուրջօրյա խնամքը՝ ապահովելով նրանց դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմաններ:

162. Ծարունակվելու է «Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը և ուսուցումը, սոցիալական պաշտպանությունը և հասարակությունում նրանց լիարժեք ինտեգրումը:

163. 2007թ. իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ., ինչպես նաև կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. Ազգային ծրագրերով նախատեսված միջոցառումները:

164. Ծարունակվելու է «Պետական աջակցություն երեխաների սոցիալական հոգածության» ծրագիրը Երևան քաղաքի Աջափնյակ համայնքում և Գյումրի քաղաքում երեխաների ցերեկային կենտրոնների միջոցով:

165. Առաջին անգամ 2007թ. իրականացվելու է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակարանների տրամադրման ծրագիրը»:

166. 2007թ. կիրականացվեն դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ. ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները:

167. Լոռու մարզում շարունակվելու է մանկատների բեռնաթափման և սոցիալական որբության կրճատման փորձնական ծրագրի իրականացումը, որի նպատակն է ապահովել երեխաների վերադարձը հարազատ միջավայր, և վերականգնել նրանց կապերն իրենց ընտանիքների և համայնքների հետ:

168. **Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի քննազավառում** 2007թ. իրականացվելու են հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությունում նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների, ինչպես նաև բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնման գործընթացի ապահովմանն ուղղված աշխատանքները:

169. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով:

170. 2007թ. նախատեսվում է ընդլայնել «Հաշմանդամների վերականգնման բազային ծրագիրը»: Շարունակվելու է հաշմանդամների պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման գործընթացը: Նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնել նաև հաշմանդամների աչքի պրոթեզավորման և ձայնաստեղծ ապարատներով ապահովելու ծրագրեր:

171. Հաշմանդամների համար մատչելի պայմաններ ապահովելու նպատակով նախատեսված է տեսողությունից հաշմանդամ անձանց համար ձեռք բերել հատուկ տառատեսակներով գրքեր և տետրեր, ձայնագրել «Խոսող գրքեր»:

172. Իրականացվելու են հաշմանդամների բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքներ:

173. Շարունակվելու են միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման աշխատանքները: Տնային պայմաններում Երևան քաղաքում սպասարկվելու է 1200 միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացի:

174. Շարունակվելու է համակարգի 4 տուն-ինտերնատներում մոտ 1010 միայնակ ծերերի ու հաշմանդամների խնամքը: Կազմակերպվելու է հոգեկան հիվանդների խնամք Վարդենիսի տուն-ինտերնատին կից ցերեկային կենտրոնում: Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, նախատեսված են ֆինանսական միջոցներ համակարգի տուն-ինտերնատներում այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպման համար:

175. Առաջին անգամ 2007թ. իրականացվելու է տարեցներին և հաշմանդամներին համայնքահեն ծառայությունների մատուցում՝ «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության միջոցով:

176. Շարունակվելու են աշխատանքներն անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովելու ուղղությամբ:

177. Իրականացվելու է բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային շինարարության, տան վերանորոգման կամ բնակարան ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով

երկարաժամկետ վարկերի, ինչպես նաև «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով նախատեսված միանվագ դրամական փոխհատուցումների տրամադրումը:

178. 2007թ. նախատեսվում է իրականացնել ծեր և հաշմանդամ քաղաքացիների խնամք և սպասարկում, ինչպես նաև մանկատների, երեխաների ցերեկային խնամքի, երեխաների ժամանակավոր խնամք իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

179. **Սոցիալական աջակցության բնագավառում** 2007թ., որպես աղքատության և անհավասարության կրճատման արդյունավետ գործիք, կշարունակի մնալ պետական նպաստների համակարգը, որը ներառում է նպաստների հետևյալ երեք տեսակները.

1. **Ընտանեկան նպաստ**, որի չափը տարբերակվում է ըստ ընտանիքների անապահովության մակարդակի, երեք միջակայքով, և դրանցից յուրաքանչյուրում, ըստ բնակության վայրի՝ բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրեր, ինչպես նաև յուրաքանչյուր խմբում 4 և ավելի երեխա ունենալու դեպքում:

2. **Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի** ծրագիրը շարունակվելու է նաև 2007թ.: Նպաստի չափը 2300 դրամ է:

3. **Երեխայի ծննդյան միանվագ նպաստի** չափը 2003թ. հոկտեմբերից կազմում է 35,0 հազար դրամ:

180. Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներին տրամադրվում է նաև **միանվագ դրամական օգնություն** ընտանիքում երեխայի ծննդյան (35,0 հազար դրամ) և հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու (20,0 հազար դրամ) դեպքերում, ինչպես նաև **հուղարկավորության միանվագ դրամական օգնություն**՝ ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու և աշխատող չէ) մահվան դեպքում:

181. Ծնելիության խթանման նպատակով 2007թ. հուլիսի 1-ից հետո ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափը առաջարկվել է սահմանել 200,0 հազար դրամ:

182. Այսպիսով, 2007թ. սոցիալական աջակցության բնագավառում կշարունակվի ֆինանսական միջոցներն առավելապես երեխա ունեցող ընտանիքներին ուղղելու քաղաքականությունը:

183. **Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտի** 2007թ. ծրագրերի արդյունավետ կառավարման նպատակով շարունակվելու են ՀՀ ծրագրային բյուջետավորման գործընթացի բարեփոխման փորձնական աշխատանքները, որոնց դրական արդյունքները կիրառվելու են բոլոր բյուջետային մարմիններում ծառայությունների վրա հիմնված ծրագրերի պլանավորման, բյուջետավորման, մոնիտորինգի, վերլուծության և գնահատման համար:

184. Կշարունակվեն աշխատանքները սոցիալական քարտերի համակարգի, մասնավորապես, պետական կառավարման այլ մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաներում կիրառման, պետական կառավարման մարմինների միջև տվյալների ավտոմատ փոխանակման, ինչպես նաև տեղեկատվական բազաներում ներառված տվյալների համադրման մեխանիզմների մշակման ուղղությամբ:

Բնակչության միգրացիայի և փախստականների ոլորտ

185. 2007թ. կշարունակվի հասարակության մեջ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած փախստականների ինտեգրման գործընթացը: Այդ ճանապարհին առկա հիմնական խնդիրներից իր լուծման վճռական փուլը կմտնի փախստականների բնակարանային ապահովության հիմնահարցը և այդ նպատակով կշարունակվեն ՀՀ կառավարության կողմից 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված համապատասխան ծրագրի իրականացման աշխատանքները:

186. Ծրագրի ֆինանսավորումն ապահովելու նպատակով ՀՀ 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում 2007թ. համար նախատեսվել է 815.0 մլն դրամ: Խնդրի լուծման համար կօգտագործվեն նաև միջազգային կազմակերպությունների և դոնոր կազմակերպությունների ֆինանսական հնարավորությունները: Ծրագրի իրականացման արդյունքում առաջիկա տարիներին ավելի քան 3000 ամենակարիքավոր փախստական ընտանիքներ կապահովվեն մշտական օրևանով:

187. Համաձայն ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի դրույթների, կշարունակվի բնակչության տեղաշարժերի ուղղությունների և ծավալների հաշվառման միասնական համակարգի ստեղծման գործընթացը, որի արդյունքում հնարավորություն կընձեռնվի գնահատելու միգրացիոն իրավիճակը և մշակելու միգրացիոն առանձին հոսքերի բացասական ազդեցությունը կանխարգելող միջոցառումներ: Կընդլայնվեն շահագրգիռ երկրների հետ անօրինական միգրացիայի պայքարի հարցերով ձևավորված համագործակցության շրջանակները:

188. Կկնքվեն միջպետական պայմանագրեր կողմերի տարածքներում անօրինական կարգավիճակում գտնվող անձանց վերադարձի, ընդունման և տարանցման կազմակերպման վերաբերյալ (ռեադմիսիոն պայմանագրեր):

189. Կմշակվեն և կիրականացվեն ՀՀ-ից ծնունդ առնող անօրինական միգրացիայի կանխարգելման, արտերկրներում անօրինական կարգավիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների ռեինտեգրացիային աջակցման ծրագրեր: Նշված ծրագրերի իրականացման համար բանակցություններ կվարվեն միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պետությունների հետ, նրանցից ֆինանսական, տեխնիկական, խորհրդատվական հնարավոր աջակցություն ստանալու նպատակով:

190. Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման արդյունավետ իրականացման նպատակով կապահովվի ՀՀ բնակչությանը միգրացիոն հիմնահարցերի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության տրամադրումը: Կստեղծվի «Միգրացիոն ծրագրերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

191. Օրենսդրական դաշտի կատարելագործմամբ և համապատասխան ծրագրերի մշակմամբ ու իրականացմամբ հետևողական պայքար կտարվի մարդկանց ապօրինի փոխադրումների ու առևտրի (թրաֆֆիքինգ) դեմ:

192. Նպատակաուղղված քայլեր կիրականացվեն միջազգային աշխատաշուկային ՀՀ քաղաքա-կիրք ինտեգրացման համար: Ուշադրության կենտրոնում կլինեն աշխատանքային էմիգրացիայի երևույթի օրենսդրական կանոնակարգման, աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության իրականացման հարցերը:

193. Աշխատանքներ կտարվեն ՀՀ քաղաքացիներին արտերկրներում որոշակի ժամկետներով պայմանագրային հիմունքներով աշխատանքի տեղավորման, աշխատանքային միգրանտների

սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված միջալետական պայմանագրերի կնքման համար:

194. Օրենսդրորեն կկարգավորվի ՀՀ քաղաքացիների Հայաստանից ելքի և Հայաստան մուտքի հետ կապված հարաբերությունները:

195. Կշարունակվեն ներքին տեղահանված անձանց իրենց բնակավայրեր վերադարձի կազմակերպման և դրանցում նրանց ամրագրման աշխատանքները՝ վերաբնակեցման վայրերում ապահովելով անհրաժեշտ պայմաններ: Այդ նպատակով կմշակվեն և կիրականացվեն համապատասխան ծրագրեր՝ դրանց ֆինանսավորմանը մասնակից դարձնելով նաև միջազգային դոնոր կազմակերպությունների:

196. Կկատարելագործվի օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հումանիտար նկատառումներով ՀՀ կողմից տրամադրվող պաշտպանության համակարգը՝ այն համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

197. Կստեղծվեն նպաստավոր պայմաններ ՀՀ երկարաժամկետ բնակություն հաստատած փախստականների և հարկադիր միգրանտների ինտեգրումն ապահովելու համար:

Մշակույթ և երիտասարդություն

198. Մշակույթի և երիտասարդության հարցերի ոլորտի հիմնական խնդիրներն առնչվում են անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի խթանման, մշակույթի ոլորտում պետական աջակցության ցուցաբերման, իրավական հիմքերի մշակման, պատմամշակութային ժառանգության պահպանման, արդի և ժողովրդական արվեստի զարգացման, մշակութային նշանակալից նվաճումների խրախուսման, արտերկրում հայկական մշակույթն արժանավայել ներկայացնելուն ուղղված ծրագրերին, մշակութային կրթության և գիտության կատարելագործմանը, ազգային փոքրամասնությունների սոցիալ-մշակութային ներդաշնակ զարգացմանը և միջմարզային մշակութային համագործակցությանը:

199. 2007թ. մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձը կբարձրանա 20 տոկոսով:

200. Ոլորտին նախատեսված աշխատանքները հիմնականում ուղղված են լինելու.

- քաղաքացիական հասարակության ձևավորմանը և մշակույթի դերի բարձրացմանը,
- մշակութային անշարժ հուշարձանների, մշակութային արժեքների, այդ թվում՝ ոչ նյութական, և հայկական տառատեսակների պահպանմանը և համակարգչային նոր տառատեսակների ստեղծմանը,
- մշակութային կրթության և գիտության համակարգմանը և ուսումնական նոր ծրագրերի ու մեթոդների ներդրմանը,
- համաշխարհային մշակութային գործընթացներին ազգային մշակույթի համաշխարհայնացմանը (ինտեգրմանը),
- մշակութային փոխանակությունների նոր ձևերի և ուղղությունների յուրացմանը,
- ՀՀ մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, համագործակցությանը պետական լիազորված մարմնի, պետական տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, համատեղ մշակութային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, դիտանցումային (մոնիտորինգային) գործընթացի և մասնագիտական գործուղումների կազմակերպմանը,
- համագործակցությանը հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ ստեղծագործական և ազգային փոքրամասնությունների միությունների հետ:

201. 2007թ. այս ոլորտին տրամադրվելիք միջոցները կուղղվեն ներքոնշյալ ենթախմբերում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորման, մշակութային և երիտասարդական ծրագրերի և ծառայությունների իրականացման ծախսերի տեսքով:

202. **Գրադարանների ոլորտում** սուբսիդիաների հատկացումները հիմնականում ուղղված են լինելու գրադարանային աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը, գրադարանային հավաքածուների համալրմանը, պահպանմանը և օգտագործմանը, միջգրադարանային բաժնույթի (արժույթային) ծառայության վերականգնմանը, գրքային հավաքածուի էլեկտրոնային գրացուցակների, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, միասնական ավտոմատացված ցանցի և ազգային մատենագիտության տեղեկատվական շտեմարանների ստեղծմանը:

203. Գրադարանների համար 2007թ. նախատեսված միջոցներն ուղղվելու են 16 գրադարանների և ՀՀ ազգային գրապալատի սուբսիդիայի հատկացմանը:

204. **Թանգարանների ոլորտում** սուբսիդիաների հատկացումները նպատակաուղղված են.

- թանգարանային աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը,
- թանգարանային հավաքածուների ամբողջացմանը և հետագա պահպանվածության ապահովմանը,
- կառավարման ավտոմատացման համակարգի ստեղծմանը,
- թանգարանային հավաքածուների հրապարակմանը, համալրմանը,
- թանգարանային առարկաների կոնսերվացմանը և վերականգնմանը,
- թանգարանային նոր մշտական ցուցադրությունների, ցուցահանդեսների կազմակերպմանը,
- թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների տվյալների թվային շտեմարանի ստեղծմանը:

205. Թանգարանների համար նախատեսված միջոցներն ուղղվելու են 39 թանգարանների սուբսիդիայի հատկացմանը և սարքերի ու սարքավորումների ձեռքբերմանը:

206. **Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների** համար նախատեսված միջոցներն ուղղվելու են 4 մշակույթի կենտրոնների սուբսիդիայի հատկացմանը:

207. **Այլ մշակութային կազմակերպությունների** համար նախատեսված միջոցներն ուղղվելու են «Տեղեկատվական-վերլուծական և հասարակայնության հետ կապերի կենտրոն», «Ժողովրդական ստեղծագործությունների և արհեստագործության կենտրոն», «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն», «Հայաստանի ազգային արխիվ» և «Երևանի կենդանաբանական այգի» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սուբսիդավորմանը և տեխնիկական վերազինմանը:

208. **Արվեստի** (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ) համար 2007թ. նախատեսված միջոցներն ուղղվելու են համակարգի թատերահամերգային կազմակերպությունների սուբսիդիաների հատկացմանը, բեմական լուսաձայնային, ռադիոսարքավորումների ձեռքբերմանը և մշակութային միջոցառումների իրականացմանը:

209. 2007թ. արվեստի ոլորտում պետական բյուջեի միջոցները առաջին հերթին կուղղվեն.

- թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի, ժողովրդական արվեստի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը, նոր ստեղծագործական պատվերների՝ երաժշտական, կերպարվեստի և դրամատիկ ստեղծագործությունների ձեռքբերմանը, թատերական փառատոնների, համաժողովրդական

տոնակատարությունների անցկացման աջակցմանը, ստեղծագործական աշխատողների աշխատանքի և զբաղվածության համապատասխան պայմանների ստեղծմանը.

- մշակութային միջոցառումների, մրցույթների, փառատոնների, ցուցահանդեսների, մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների և մշակութային նշանավոր իրադարձությունների հորելյանների կազմակերպմանն ու անցկացմանը.

- ՀՀ վավերացրած միջպետական համաձայնագրերին, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման ծրագրերին համապատասխան՝ սփյուռքի հետ մշակութային հարաբերությունների զարգացմանը, արտերկրում հայ արվեստի ներկայացմանը (միջազգային ծրագրերի, սփյուռքի հետ համագործակցության միջոցառումների իրականացում՝ 80.0 մլն դրամ):

210. Սուբսիդիաների տրամադրումը նպատակ ունի ապահովել թատրոնների, համերգային կազմակերպությունների բնականոն գործունեությունը՝ որպես հայ մշակույթի ինքնատիպության, ազգային ինքնագիտակցության, լեզվի պահպանման և ամրապնդման միջոց:

211. **Կինոարվեստի ոլորտին** ուղղված հատկացումները նպատակ ունեն միջազգային չափորոշիչներին համապատասխան աջակցություն ապահովել հայրենական կինոարտադրության, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին ՀՀ մասնակցության, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանմանը:

212. **Պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության ոլորտի** համար նախատեսված հատկացումներն ուղղված են ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, վավերագրման, վկայագրերի, պետական ցուցակների, պահպանական գոտիների վերականգնման և բարեկարգման, տարածքների նախագծերի կազմման, պատմամշակութային անշարժ ժառանգության, գիտատեղեկատու շտեմարանի կազմման և հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացմանը:

213. **Գրահրատարակչության և տեղեկատվություն ոլորտի** համար նախատեսված հատկացումներն ուղղված են լինելու հանրագիտարանային, մանկական, գիտահանրամատչելի, հորելյանական և այլ գրականության, թերթերի, ամսագրերի հրատարակման իրականացման ապահովմանը, տեղեկատվության ձեռքբերմանը, պահպանման և արխիվացման համար պայմանների ստեղծմանը:

214. 2007թ. կշարունակվի համահայկական հրատարակչական դաշտի ձևավորումը, սփյուռքի հետ ակտիվ համագործակցությունը, ՀՀ հրատարակված գրքերի տարածումը և արտերկրում հայկական գրքարվեստի քարոզչությունը, Հայաստանում լույս տեսած գրքերի ընթացիկ լիակատար կատալոգների հրատարակումը:

215. **Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտի** 2007թ. ծախսային ծրագրերի հիմնական նպատակն է ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակությանն առավել լիարժեք օգտագործելու համար:

216. 2007թ. միջոցառումների նպատակն է.
- բարելավել երիտասարդների կենսապայմանները և բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,

- նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,

- ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և իրականացնել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ,

- հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, իրականացնել ծրագրեր՝ ուղղված երիտասարդության շրջանում հայրենասիրության դաստիարակմանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,

- ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,

- ստեղծել պայմաններ՝ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար,

- ապահովել մարզային երիտասարդական կենտրոնների գործունեությունը,

- իրականացնել գյուղական շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումներ,

- ստեղծել պայմաններ երիտասարդների լիակատար ինքնադրսևորման համար:

217. ***Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում*** 2007թ. ծրագրերի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը.

- բնագավառի գործունեությունն ապահովող նոր իրավական ակտերի մշակում և ընդունում,

- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման պետական քաղաքականության կատարելագործում՝ ՀԱՕԿ-ին, մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաներին, հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններին, Կոմիտեի ենթակայության և հասարակական մարզական կազմակերպությունների 30 մարզադպրոցներին, Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներին ֆինանսական աջակցության ցուցաբերում,

- բնակչության առողջության ամրապնդում, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի կատարելագործում, անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ձևավորում , ակտիվ հանգստի կազմակերպում,

- հանրապետության մարզերում ազգային մարզաձևերի վերականգնում,

- հաշմանդամների տարբեր խմբերի համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծում,

- նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ՀՀ զինված ուժերում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում,

- հանրակրթական դպրոցներում, ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» և «Ֆիզիկական դաստիարակություն» առարկաների դասավանդման և մարզադպրոցներում ուսուցման մակարդակի բարելավում, 8-րդ և 10-րդ դասարանների ավարտական և պետական քննությունների նորմատիվային պահանջների վերանայում և կատարելագործում,

- միջազգային սպորտային կազմակերպություններում ՀՀ ազգային օլիմպիական կոմիտեի և նոր մարզաձևերի միջազգային ֆեդերացիաների ինտեգրման գործընթացի խթանում,

- միջազգային մարզական ասպարեզում հանրապետության վարկանիշի բարձրացման ապահովում,

- մարզաձևերի հանրապետական առաջնությունների և ուսումնա-մարզական հավաքների կազմակերպում, մարզիկների վարպետության բարձրացում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարերին և Պարալիմպիկ խաղերին հանրապետության մարզիկների նախապատրաստման և հաջող մասնակցության ապահովում,

- հանրապետության հավաքական թիմերի անդամների բժշկական վերահսկողության և վերականգնողական միջոցների, բժշկակենսաբանական, հոգեբանական և հակադրային գալիս հետազոտությունների իրականացում, անհրաժեշտ մարզագույքով և հանդերձանքով ապահովում,

- աշխարհի, Եվրոպայի և օլիմպիական խաղերի մրցանակակիրներին և նրանց մարզիչներին սահմանված կարգով դրամական պարգևատրումների իրականացում,

- պետական ծրագրերով, անկախ գերատեսչական պատկանելիությունից, մարզակառույցների վերանորոգման աշխատանքների իրականացում, ամենամյա գույքային ծրագրի շրջանակներում դրանք անհրաժեշտ մարզագույքով ու սարքավորումներով ապահովում,

- Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված մեթոդական գրականության, ֆիզիկական դաստիարակության չափորոշիչների թարգմանություն, տպագրում, բազմացում և տարածում,

- հանրապետական, մարզային և տարածաշրջանային սեմինար-խորհրդակցությունների և կլոր սեմինարների կազմակերպում, հանրությանը և մարզաշխատողներին Եվրախորհրդի կողմից հրատարակված մեթոդական գրականությանը ծանոթացման և դրանք գործնականում կիրառման ապահովում:

218. Բնագավառում իրագործվող բարեփոխումները կնպատակաուղղվեն մարզակառույցների արդյունավետ շահագործմանը, մարզական միջոցառումների մասնակիցների անվտանգության ապահովմանը:

Բնապահպանության ոլորտում

219. 2007թ. կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված կլինի բնական պաշարների վերականգնելիությունը և բանական օգտագործումն ապահովող համակարգի հետագա զարգացմանը, կատարելագործմանը և արդիականացմանը: 2007թ. բյուջետային միջոցները ուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությանը, խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների իրականացմանը:

220. **Սևանա լճի համալիր ծրագրի և ԱՀՌԾ շրջանակներում** 2007թ. իրականացվելու է այդ ծրագրերով նախատեսված համապատասխան միջոցառումների կատարումը, այդ թվում՝

- «Ձկան պաշարների համալրման գծով պետական պատվեր» ծրագրի իրականացում,
- Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում,
- Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ:

221. **«Բնապահպանական նպատակային ծրագրերի»** շրջանակներում 2007թ. նախատեսված է ապահովել ԱՀՌԾ-ով և հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով նախատեսված բնապահպանության և բնօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը, բնապահպանական ստանդարտների և նորմատիվների համակարգի ձևավորմանը նպատակաուղղված միջոցառումների ու այլ ծրագրերի իրականացումը, այդ թվում՝

- ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագիր,

- պետական աջակցություն բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով,

- պետական աջակցություն «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին,
- ջրի ազգային ծրագրի մշակման աշխատանքներ:

222. Բացի նշված գործող ծրագրերից, 2007թ. իրականացվելու են հետևյալ նոր ծրագրերը՝

- ՀՀ-ում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործունեությունների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ծրագիր,
- Արաքս գետի հիդրոլոգիական դիտակետերի վերանորոգման և շինարարական աշխատանքներ,
- «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման ծրագիր,
- ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագիր:

223. **Հիդրոտերևութաբանության ոլորտում** աշխատանքները նպատակաուղղվելու են.

- միջազգային չափանիշներին համապատասխանող օդերևութաբանական, ագրոտերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտինոմետրիական, օզոնամետրիական և աէրոլոգիական դիտարկումների կատարմանը,

- կլիմայի փոփոխության ուսումնասիրության և կլիմայի մոնիտորինգի իրականացմանը,
- հանրապետության տարածքում ռադիացիոն մոնիտորինգի կատարմանը,

- հիդրոտերևութաբանական տվյալների հավաքագրմանը, կանխատեսումների և վտանգավոր աղետային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների կազմմանը,

- հանրապետության ղեկավար մարմիններին, զինված ուժերին, ավիացիային, տնտեսվարող սուբյեկտներին, գյուղատնտեսությանը, էներգետիկային, տրանսպորտին և այլ շահագրգիռ կազմակերպություններին հիդրոտերևութաբանական, ռադիացիոն և հելիոտերկրաֆիզիկական տարբեր տեղեկատվությամբ ապահովմանը,

- հիդրոտերևութաբանական կայանների տեխնիկական վերազինմանը:

224. **Շրջակա միջավայրի մոնիտորինգի ոլորտում** աշխատանքները նպատակաուղղվելու են.

- ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի աշխատանքների իրականացմանը

- «Ծաղկաձորի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի կայանի ստեղծում և շահագործում» ծրագրի իրականացմանը,

- «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինմանը:

225. **Ընդերքի ուսումնասիրության և պահպանության ոլորտի** գծով կատարվող երկրաբանական ուսումնասիրությունները նպատակաուղղվելու են հանրապետության տարածքում օգտակար հանածոների նոր երևակումների հայտնաբերմանը և երկրաբանական մի շարք կարևոր հիմնահարցերի պարզաբանմանը՝ նպատակաուղղված երկրաբանական, հիդրոերկրաբանական ու երկրաֆիզիկական ուսումնասիրություններին և քարտեզագրմանը: Այդ թվում իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ 1:50000 մասշտաբի երկրաբանապահպանական հետազոտություններ և քարտեզագրություն՝ Երևան քաղաքի և շրջակա տարածքներում (K-38-137, A- B, Г: (K-38-A,Б թերթեր),

- ՀՀ տարածքի հյուսիս-արևմտյան մասերի (K-38 – XXVI, XXVII թերթերի) 1:200000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմում և նախապատրաստում հրատարակության,

- Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտների 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթ (K-38-126, B, Γ 138-A, B, B, Γ):

226. Բացի նշված ծրագրերից, 2007թ. ընդերքի ուսումնասիրության և պահպանության ոլորտի ուղղությամբ իրականացվելու են նաև հետևյալ ծրագրերը.

- պետական աջակցություն «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին,
- պահուստային (Արմավիրի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում) հանքավայրերի գույքագրում:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

227. 2007թ. **հարկային քաղաքականության հիմնական** ուղղվածությունը կնպաստի վերջին տարիներին կառավարության կողմից վարվող քաղաքականության իրականացմանը՝ ապահովելով իրականացվող բարեփոխումների քաղաքականության հետևանքով ոլորտում նկատվող դրական միտումների զարգացումը:

228. 2007թ. հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի հարկային օրենսդրության հստակեցմանը.

- կձեռնարկվեն միջոցներ տարբեր հարկային ռեժիմներում գործող տնտեսվարող սուբյեկտների հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխման ուղղությամբ՝ համահունչ լինելով տնտեսության զարգացման միտումներին,

- կշարունակվեն միջոցառումներ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների պետական բյուջեից հետ վերադարձման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ՝ միաժամանակ բարձրացնելով չկատարված հարկային պարտավորությունների գանձելիության մակարդակը,

- կկատարելագործվեն և գործնական կիրառում կստանան հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմները,

- կձեռնարկվեն միջոցառումներ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները նախապատրաստելու համար:

229. **Հարկային վարչարարության** բնագավառում արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները կերաշխավորեն բյուջետային եկամուտների հավաքագրման բարձր մակարդակի ապահովումը:

230. Հարկային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցների կատարելագործումը և լայնածավալ կիրառումը հնարավորություն կընձեռնեն ապահովել հարկային եկամուտների հավաքագրման կայունությունը և համաչափությունը:

231. Այդ նպատակով կշարունակվեն ոլորտային վերլուծությունները և հարկային օրենսդրության պահանջները չկատարողների հանդեպ պատասխանատվության հարկային լծակների արդյունավետ կիրառումը:

232. Հարկային մարմինների աշխատանքների թափանցիկությունը և հասարակությունում հարկերի ճիշտ և ժամանակին վճարման վերաբերյալ քարոզչական միջոցառումները կերաշխավորեն հարկերի վճարման կամովիության սկզբունքի արմատավորումը:

233. 2007թ. կառավարության կողմից իրականացվելիք հարկային վարչարարության առանցքային ուղղություններից մեկը կհանդիսանա չհարկվող (ստվերային) շրջանառությունների կրճատումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տնտեսության առանձին ոլորտների վրա:

234. Տնտեսական հանցագործությունների դեմ հետևողական պայքարը կնպաստի տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցության հավասար պայմանների ապահովմանը, որը միաժամանակ կնվազեցնի ստվերում գործող կամ հարկերը թերհայտարարագրող տնտեսվարող սուբյեկտների ազդեցությունը շուկայի վրա:

235. 2007թ. կշարունակվի **մաքսային ոլորտը** կարգավորող օրենսդրության հստակեցումն ու պարզեցումը, մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության ապահովումը:

236. Մասնավորապես, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից կիրականացվի մաքսային օրենսդրության և ընթացակարգերի հստակեցում և պարզեցում՝ հաշվի առնելով մաքսային մարմինների միջև ընդհանուր կապի ընձեռնած հնարավորությունները: Մաքսային ձևակերպումների գործընթացում ընդլայնվելու է 2006թ. մաքսային մարմիններում ներդրված ինքնահայտարարագրման համակարգի շրջանակները:

237. Շարունակվելու է ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային մարմիններին վերապահված հետքացթողումային հսկողության իրականացումը: Հետքացթողումային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է համաձայնագրեր կնքել այն երկրների մաքսային ծառայությունների հետ, որոնց հետ իրականացվում է արտաքին առևտուր:

238. Մաքսային մարմինների գործունեության բնագավառում առանձնահատուկ տեղ է հատկացվելու համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ մաքսային զննման և հաշվառման վայրերի ստեղծման աշխատանքներին:

239. Վերը նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կնձեռնի մաքսային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցների ներդրմանը, ինչպես նաև կբարձրացնի մաքսային վճարների հավաքագրման արդյունավետությունը:

Պետական գումների համակարգ

240. 2007թ. ՀՀ կառավարությունը նախատեսում է շարունակել գումների համակարգի բարեփոխումները՝ հիմնական շեշտադրումը դնելով ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 137-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային գումների համակարգի ներդրման ռազմավարությամբ նախատեսված գործառնությունների կատարման վրա:

Գանձապետական համակարգ

241. 2007թ. ՀՀ կառավարությունը նախատեսում է շարունակել ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի իրականացումը, որի շրջանակներում նախատեսվում է՝

- 2008թ. սկսած բյուջեների պլանավորման ժամանակ կիրառել «GFS-2001»-ի պահանջներին համապատասխան ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր դասակարգումներ,
- մշակել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող հաշվեգրման հիմունքով ստանդարտներ,
- իրականացնել կառավարության ֆինանսական տեղեկատվական համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքներ:

Ներքին աուդիտի համակարգ

242. 2007թ. ՀՀ կառավարությունը նախատեսում է շարունակել աշխատանքները ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ: Մասնավորապես.

- ներքին աուդիտի նոր ստանդարտների, ներքին աուդիտի անցկացման գործառնական և այլ ընթացակարգերի մշակում և հաստատում,

- ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարում, ներառյալ «ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագծումը,

- ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ հաշվետվական համակարգի մշակում և ներդրում:

243. Նախատեսվում է նաև կազմակերպել վերապատրաստման և որակավորման գնահատման ծրագրեր պետական իշխանության մարմինների գնումների մասնագետների, գլխավոր ֆինանսիստների, աուդիտորների և գլխավոր հաշվապահների համար, իրականացնել գանձապետական համակարգի տեխնիկական ապահովման և սպասարկման աշխատանքներ:

Հաշվապահական հաշվառման ոլորտ

244. 2007թ. շարունակվելու են հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումները: Հաշվի առնելով հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային ստանդարտներում կատարված էական փոփոխությունները՝ ընդունվելու և կիրառության մեջ են դրվելու համապատասխան ստանդարտներ, լրամշակվելու են գործող առանձին ստանդարտներ, փոքր և միջին ձեռնարկատիրության համար մշակվելու են հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներ, ինչպես նաև դրանց կիրառմանն օժանդակող մեթոդական նյութեր: Շարունակվելու է նշված ոլորտների զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականությունը, մասնավորապես, օրենսդրական դաշտի կատարելագործման, հաշվապահական հաշվառման և աուդիտի որակի բարձրացման ուղղությամբ:

245. **Աուդիտորական գործունեության ոլորտ** 2006թ. ընթացքում աուդիտորական գործունեության ոլորտում իրականացված աշխատանքները՝ համապատասխան իրավական ակտերի ընդունումը, աուդիտորների որակավորման քննությունների վերսկսումը, լիազորված պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կատարելագործումն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել բարելավելու անհատ աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների, այդ թվում՝ աուդիտորների վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպման և իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնց արդյունքում էականորեն կբարձրանա աուդիտի որակը:

Պետական գույքի կառավարում

246. Պետական գույքի մասնավորեցման ոլորտում.

- պետական գույքի մասնավորեցման ձևերից առավելագույնս կիրառել հրապարակային սակարկություններով մասնավորեցումը,

- մրցույթով, ուղղակի վաճառքով մասնավորեցման ներկայացնելիս ուշադրությունը կենտրոնացնել իրականացվելիք ներդրումային ծրագրերի հիմնավորվածության և սոցիալական երաշխիքների ապահովվածության վրա,

247. Պետական գույքի կառավարման ոլորտում.

- կատարելագործել պետական գույքի հաշվառման գրանցամատյանը,
- ավարտել պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման աշխատանքները:

Անշարժ գույքի կադաստր

248. 2007թ. անշարժ գույքի կադաստրի զարգացման հիմնական ուղղություններն ու գերակայությունները հետևյալն են.

- ՀՀ տարածքում անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի ներդրումը և դրա արդյունավետ կառավարման ապահովումը.

- ՀՀ տարածքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ավտոմատացված on-line համակարգի ներդրում, անշարժ գույքի վերաբերյալ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ներդրում և կառավարում. անշարժ գույքի կադաստրի 47 տարածքային ստորաբաժանումներում և տեղեկատվական կենտրոնում ներդրվելու է անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգ և ապահովվելու է արտաքին օգտագործողներին դրա հասանելիությունը,

- շուկայական մեխանիզմների վրա հիմնված՝ հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրում և գնահատման աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացում,

- անշարժ գույքի շուկայի զարգացմանն աջակցում:

- Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը.

- պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրայի, թեմատիկ) թվային ֆոնդի ստեղծում՝ հիմնված նորագույն տեխնոլոգիաների վրա,

- արբանյակային, օդային և վերգետնյա հանույթային տեխնոլոգիաների հիման վրա ֆոտոգրամետրիկ մեթոդների ներդրում,

- աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում,

- արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացում:

- Հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը.

- ՀՀ վարչատարածքային նոր բաժանման, պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպում և իրականացում,

- հողային ռեսուրսների կառավարման, հողերի օգտագործման արդյունավետության բարձրացում,

- հողերի միավորման ծրագրերի կազմակերպում և աջակցում,

- պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործում, հողի շուկայի ձևավորման աջակցություն:

Պետական վիճակագրություն

249. Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղված է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը և խարսխվում է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում (15 ապրիլի 1992թ.) և Միավորված ազգերի կազմակերպության Վիճակագրական հանձնաժողովի կողմից (14 ապրիլի 1994թ.) ընդունված պաշտոնական վիճակագրության 10 հիմնարար սկզբունքների, ինչպես նաև ի լրումն այդ սկզբունքների՝ Եվրախորհրդի Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից ընդունված (24 փետրվարի 2005թ.) Եվրոպական վիճակագրության վարքականոնով սահմանված 15 սկզբունքների ու դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների ու ստանդարտների վրա:

250. Համաձայն պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների՝ վիճակագրությունը պետք է պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակության, բիզնեսի պահանջմունքների բավարարման համար ծրագրային աշխատանքի ընթացքում ապահովի անկողմնակալություն (անկախություն), տեղեկատվությունից օգտվելու հավասար մատչելիություն, պրոֆեսիոնալ ստանդարտներ, արդյունավետություն, հաշվետվողականություն և թափանցիկություն, սկզբնական (անվանական) տվյալների գաղտնիություն և այլն:

251. Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով, մասնավորապես նախատեսվում է.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

- վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

- վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), ինչը ենթադրում է նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

- վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները, միաժամանակ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները,

- համալրել, արդիանականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) քիզնես-ռեզիստորի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

- շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

- անցում կատարել վարչական ռեզիստորների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

- տեղական (համայնքային) վարչական ռեզիստորների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց, կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

- շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

- ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման նպատակով՝ աշխատանքներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

- վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով՝ ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները,

- կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

Քարեփոխումներ բյուջեների կազմման բնագավառում

258. 2007թ. շարունակվելու են բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում՝ պիլոտային պետական մարմինների մակարդակով ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման ուղղությամբ: